Հաստատված է
Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 31.08.2020 թ.
նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետ՝ ................................
(ստորագրություն)
..................................
(ամիս ամսաթիվ)

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

| | | |
|---|---|---|
| ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ | | Իրավունքի տեսության հիմնահարցեր |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ | | |
| ՖԱԿՈՒԼՏԵՏ | | Իրավագիտություն (մագիստրատուրա), առկա ուսուցում |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | | Իրավագիտություն |
| ԱՄԲԻՈՆ | | Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն<br>E-mail: pitambion@mail.ru |
| ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ | | Մ.Մանուկյան<br>E-mail:marymanukyanmmb@gmail.com հեռ. 099101035 |
| ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ | | 1-ին կուրս, 1-ին կիսամյակ |
| ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ | | մագիստրոս |

| | | |
|---|---|---|
| ԿՐԵԴԻՏՆԵՐ | | **3(կրեդիտ)** |
| ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ | | «Իրավունքի տեսության հիմնահարցեր» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 28 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք, 58 ժամ ինքնուրույն աշխատանք:<br><br>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ստուգարք հանձնելով: |

| | | |
|---|---|---|
| **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ** | | Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն» առարկայից ձեռք բերված գիտելիքների հիման վրա: |
| | | |
| **ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ** | | «Իրավունքի տեսության հիմնահարցեր» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են իրավունք հասկացությունը, էությունը, արժեքը, իրավունքի գործառույթների հասկացությունը, նշանակությունը և տեսակները, իրավունքի գործառույթների համակարգը, իրավունքի հատուկ իրավաբանական գործառույթների ընդհանուր բնութագիրը,իրավահարաբերության հասկացությունը և հատկանիշները և տեսակները, բովանդակությունը,իրավաբանական փաստի հասկացությունը և տեսակները, իրավական կանխավարկածների հասկացությունը, իրավաբանական վարույթի հասկացությունը և հատկանիշները, տեսակները, փուլերը, սկզբունքները,իրավական կարգավորման հասկացությունը,տեսակները և փուլերը, իրավական կարգավորումը որպես իրավական ներգործության հիմնական ձև, իրավական կարգավորման մեթոդները և եղանակները, տիպերը, իրավաստեղծ գործունեության հասկացությունը և սկզբունքները, տեսակները, փուլերը, իրավաբանական տեխնիկայի հասկացությունը,օրենսդրության համակարգումը, իրավունքի իրացման (կենսագործման) հասկացությունը և ձևերը, տեսակները,իրավական (օրենսդրական) բացերը, իրավական նորմերի կիրառումն անալոգիայով իրավունքի մեկնաբանման հասկացությունը, նպատակները և գործառույթները, տեսակները, եղանակները, ակտերը, իրավական կոլիզիայի հասկացությունը և պատճառները, իրավական կոլիզիաների լուծման կառուցակարգերը, հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաները և դրանց լուծումը: |
| | | |

| | | |
|---|---|---|
| **ՆՊԱՏԱԿ** | | Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ իրավունքի հասկացության, էության, արժեքի, իրավունքի գործառույթների, իրավունքի գործառույթների համակարգի, իրավունքի հատուկ իրավաբանական գործառույթների ընդհանուր բնութագրի, իրավահարաբերության հասկացության և հատկանիշների և տեսակների, իրավաբանական փաստի հասկացության և տեսակների, իրավական կանխավարկածների հասկացության, իրավաբանական վարույթի հասկացության և հատկանիշների, իրավական կարգավորման հասկացության, տեսակների և փուլերի, իրավական կարգավորումը որպես իրավական ներգործության հիմնական ձևի, իրավական կարգավորման մեթոդների և եղանակների, տիպերը, իրավաստեղծ գործունեության հասկացության և սկզբունքներ, տեսակների, փուլերի, իրավաբանական տեխնիկայի հասկացության, օրենսդրության համակարգման, իրավունքի իրացման (կենսագործման) հասկացության և ձևերի, տեսակների, իրավական (օրենսդրական) բացերի, իրավական նորմերի անալոգիայով կիրառելու, իրավունքի մեկնաբանման հասկացության, նպատակների և գործառույթների, տեսակների, եղանակների, իրավական կոլիզիայի հասկացության և պատճառների, իրավական կոլիզիաների լուծման կառուցակարգերի, հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաներ վերաբերյալ: |
| **ԽՆԴԻՐ/ՆԵՐ** | | Դասընթացի խնդիրներն են`<br>• ներկայացնել իրավունքի հասկացությունը, էությունը, արժեքը,<br>• ուսումնասիրել իրավունքի գործառույթների հասկացությունը, դասակարգումը, նպատակները<br>• սահմանել իրավահարաբերության հասկացությունը, կառուցվածքը, տալ իրավահարաբերության դասակարգումը<br>• ներկայացնել իրավաբանական վարույթի հասկացությունը, տեսակները, սկզբունքները, փուլերը<br>• ուսումնասիրել իրավական |

| | | |
|---|---|---|
| | | կարգավորման խնդիրները, տեսակները, կառուցվածքը, եղանակները,մեթոդները<br>• սահմանել իրավաստեղծ գործունեության հասկացությունը, ներկայացնել տեսակները, գործունեության փուլերը<br>• ուսումնասիրել իրավունքի իրացումը իրավակիրառման համակարգում, իրավակիրառման փուլերը, տեսակները և օրենսդրական բացերը<br>• ներկայացնել իրավունքի մեկնաբանման հասկացությունը, նպատակները, գործառույթները, մեկնաբանման եղանակները<br>• սահմանել իրավական կոլիզիայի հասկացությունը, ուսումնասիրել դրանց պատճառները, ներկայացնել դրանց լուծումը |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**<br><br>*Կարողանա՝* | | 1. սահմանել իրավունքի հասկացությունը, վերլուծել դրա հատկանիշները, բացահայտել իրավունքի էությունը և արժեքը<br>2. սահմանել իրավունքի գործառույթների հասկացությունը, բացահայտել գործառույթների միջև կապը<br>3. սահմանել իրավահարաբերության հասկացությունը, բացահայտել կառուցվածքային տարրերի միջև կապը<br>4. սահմանել իրավաբանական վարույթի հասկացությունը, ներկայացնել տեսակները,փուլերը,կառուցվածքը<br>5. սահմանել իրավական կարգավորման հասկացությունը, կարգավորման առարկայի հասկացությունը, մեթոդներն ու եղանակները<br>6. սահմանել իրավաստեղծ գործունեության հասկացությունը, ներկայացնել դասակարգումը, հիմնավորել օրենսդրության համակարգման անհրաժեշտությունը<br>7. սահմանել իրավակիրառման հասկացությունը, հատկանիշները, տեսակները<br>8. սահմանել իրավունքի մեկնաբանման հասկացությունը, եղանակները, ներկայացնել իրավոհինքի մեկնաբանման ակտերը<br>9. սահմանել իրավական կոլիզիաների հասկացությունը, վերլուծել դրանց առաջացման պատճառները, ներկայացնել իրավական կոլիզիաների լուծման կառուցակարգերը |

| | | |
|---|---|---|
| **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** | | |

| | | |
|---|---|---|
| **Հիմնական** | | 1. Պետության և իրավունքի տեսություն: Ուս. ձեռնարկ / Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Երևան, □Լուսաբաց□հրատ, 2014, 692 էջ,<br>2. Պետության և իրավունքի տեսություն: Ուս. ձեռնարկ / Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 2-րդ լրամշակված հրատ., Երևան, □Լուսաբաց□ հրատ, 2016, 628 էջ,<br>3. Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն - 1/ Դասախոսություններ, ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2013, 224 էջ,<br>Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն - 1/ Դասախոսություններ, ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, 280 էջ,<br>4. Матузов Н. И., Малько А. В. Теория государства и права. Курс лекций. М., Изд-во «Юристь», 1997, 672 стр.<br>5. Хропанюк В. Н., Теория государства и права / Учебник, 3-е изд., доп. и испр., М., Изд-во «Омега-Л», 2008, 384 стр.,<br>6. Общая теория права и государства: Учебник для вузов / В. С. Нерсесянц, М., Изд-во «Норма: НИЦ ИНФРА-М», 2015, 560 стр.: |
| | | |
| **Լրացուցիչ** | | 1. Վաղարշյան Ա., «Իրավունք» հասկացության տեսամեթոդական և գործնական նշանակությունը // «Բանբեր Երևանի համալսարանի», «Իրավագիտություն», Երևան, 2014, 144.3, (№ 3), էջեր 3-13,<br>2. Վաղարշյան Ա., Իրավունքի աղբյուրների ու իրավական կարգավորման միջոցների հարաբերակցությունը և հասարակական հարաբերությունների կարգավորման ստորակարգությունը // Պետություն և իրավունք, Երևան, 2006, թիվ 2-3 (32-33), էջեր 5-11,<br>3. Керимов Д.А. Проблемы общей теории государства и права: Учеб. пособие, М., 2000. 179 стр.,<br>4. Лебедев В. А. // Государственная власть как форма выражения публичной власти / Вестник Челябинского государственного университета, 2010, № 25 (206) Право, Вып 25, стр. 5-9,<br>5. Мелехин А. В., Теория государства и права: Учебник, М., Маркет ДС, 2007, 640 стр.,<br>6. Венгеров А. Б., Теория государства и права: Учебник для юридических вузов. 3-е изд., М., Юриспруденция, 2000, 528 стр,<br>7. Матузов Н. И., Малько А. В. Теория государства и права. М., Изд-во «Юристь», 2004, 512 стр.,<br>8. Абдулаев М. И., Теория государства и права: Учебник для высших учебных заведений, М., Финансовый контроль, 2004, 410 стр.: |
| | | |

| | | |
|---|---|---|
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ** | | Ստուգարք (ստուգված, չստուգված) |
| | | |
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ** | | Ուսանողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:<br>Ուսանողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», |

| | | |
|---|---|---|
| | | «Բավարար» կամ «Անբավարար»:<br>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝<br>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ճիշտ է հիմնավորում պատասխանը, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.<br>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է տեսական դրույթները ճիշտ տեղայնացնել կոնկրետօրինակներում.<br>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հա-ջորդականությունը.<br>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ: |
| | | |
| ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| | | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին: |
| **Ներկայություն**<br><br>**Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** | | Սովորողի՝ դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննար-կումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորու-թյուն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև՝ մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: |
| **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ** | | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: |
| | | Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:<br>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդուն- |

| | | |
|---|---|---|
| | | ված ակադեմիական ձևաչափի: |

## ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

| Թեմա 1<br>Իրավունքի հասկացությունը և էությունը<br>(2ժամ դասախոսություն) | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Իրավունքի հասկացությունը և հատկանիշները<br>2. Իրավունքի էությունը<br>3. Իրավունքի արժեքը | Հարցեր 1-3 –ներկայացվում է դասախոսության՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br>Ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առանձնացնում իրավունքի հիմնական հատկանիշները: |

| Թեմա 2<br>Իրավունքի գործառույթները<br>(2ժամ դասախոսություն) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Իրավունքի գործառույթների հասկացությունը և սոցիալական նշանակությունը<br>2. Իրավունքի գործառույթների համակարգը<br>3. Իրավունքի հատուկ իրավաբանական գործառույթ-ների ընդհանուր բնութագիրը | Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն:<br>Ինքնուրույն աշխատանք. սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը և դասախոսին ներկայացնում իրավունքի գործառույթների սահմանման և □իրավունքի դեր□, □իրավունքի խնդիր□ ու □իրավունքի գործողություն□ հասկացություններից դրանց տարանջատման հիմնախնդիրներն ու այդ կապակցությամբ սեփական մոտեցումները: |

| Թեմա 3<br>Իրավահարաբերություն<br>(2ժամ դասախոսություն) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Իրավահարաբերություն հասկացությունը և հատ-կանիշները<br>2. Իրավահարաբերության տեսակները<br>3. Իրավահարաբերություն սուբյեկտ: Իրավասուբյեկ- | Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն:<br>Հարցեր 3-6 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը և դրա վերլուծության հիման վրա |

| | |
|---|---|
| տություն<br>4. Իրավահարաբերության օբյեկտ<br>5. Իրավահարաբերության բովանդակություն<br>6. Իրավաբանական փաստի հասկացությունը և տեսակները | դասախոսին ներկայացնում իրավահարաբերության կառուցվածքային տարրերի վերաբերյալ տեսական մոտեցումները և այդ կապակցությամբ սեփական դիրքորոշումները: |

| **Թեմա 4<br>Իրավաբանական վարույթ<br>(4ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Իրավաբանական վարույթի հասկացությունը և<br>2. հատկանիշները<br>3. Իրավաբանական վարույթի տեսակները<br>4. Իրավաբանական վարույթի փուլերը<br>5. Իրավաբանական վարույթի սկզբունքները | Հարցեր 1- 4 անցկացվում է դասախոսություն:<br>Ինքնուրույն աշխատանք: Սովորողներն ինքնուրույն ծանոթանում են իրավաբանական վարույթի հասկացության վերաբերյալ տեսական գրականության մեջ առկա կարծիքներին, կարդում են գիտական հոդվածներ իրավաբանական վարույթի տեսակների, փուլերի, սկզբունքների վերաբերյալ, գրում են ռեֆերատներ: |

| **Թեմա 5<br>Իրավական կարգավորում<br>(4ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Իրավական կարգավորման հասկացությունը, տեսակները և փուլերը<br>2. Իրավական կարգավորումը որպես իրավական ներգործության հիմնական ձև<br>3. Իրավական կարգավորման առարկայի հասկացությունը և կառուցվածքը<br>4. Իրավական կարգավորման մեթոդները և եղանակները<br>5. Իրավական կարգավորման տիպերը | Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն:<br>Ինքնուրույն աշխատանք: Սովորողներն ինքնուրույն ծանոթանում են իրավական կարգավորման վերաբերյալ տեսական գրականության մեջ առկա կարծիքներին, կարդում են գիտական հոդվածներ իրավական կարգավորման տեսակների, փուլերի, սկզբունքների, մեթոդների, կարգավորման տիպերի, ներգործության ձևերի վերաբերյալ, գրում են ռեֆերատներ: |

| **Թեմա 6<br>Իրավաստեղծ գործունեություն<br>(4ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |

| | |
|---|---|
| 1. Իրավաստեղծ գործունեության հասկացությունը և սկզբունքները<br>2. Իրավաստեղծ գործունեության տեսակները<br>3. Իրավաստեղծ գործունեության փուլերը<br>4. Իրավաբանական տեխնիկա<br>5. Օրենսդրության համակարգումը | Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն:<br>Ինքնուրույն աշխատանք: Սովորողներն ինքնուրույն ծանոթանում են իրավաստեղծ գործունեության վերաբերյալ տեսական գրականության մեջ առկա կարծիքներին, կարդում են գիտական հոդվածներ իրավաստեղծ գործունեության տեսակների, փուլերի, սկզբունքների, իրավաբանական տեխնիկայի վերաբերյալ, գրում են ռեֆերատներ, ուսումնասիրում են օրենսդրության համակարգման հիմնախնդիրները ՀՀ-ում: |

| **Թեմա 7**<br>**Իրավակիրառումը իրավունքի իրացման համակարգում**<br>**(4ժամ դասախոսություն,2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Իրավունքի իրացման (կենսագործման) հասկացությունը և ձևերը<br>2. Իրավակիրառման հասկացությունը և հատկանիշները<br>3. Իրավակիրառման փուլերը և իրավակիրառակտերը<br>4. Իրավակիրառ հայեցողության հասկացությունը, նշանակությունը և տեսակները<br>5. Իրավակիրառման տեսակները<br>6. Իրավական (օրենսդրական) բացերը, իրավական նորմերի կիրառումն անալոգիայով | Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն:<br>Հարցեր 1-6- անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում եմ հարցերի շրջանակներում ձեռք բերված գիտելիքները, կատարում են խմբային քննարկումներ, ներկայացնում են կատարված ինքնուրույն աշխատանքի արդյունքները, փորձում են տեսական գիտելիքներն ամրապնդել գործնական աշխատանքով:<br>Ինքնուրույն աշխատանք: Սովորողներն ինքնուրույն ծանոթանում են իրավակիրառ գործունեության վերաբերյալ տեսական գրականության մեջ առկա կարծիքներին, կարդում են գիտական հոդվածներ իրավակիրառ գործունեության տեսակների, փուլերի, սկզբունքների վերաբերյալ, գրում են ռեֆերատներ: |

| Թեմա 8<br>Իրավունքի մեկնաբանում<br>(4ժամ դասախոսություն) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Իրավունքի մեկնաբանման հասկացությունը, նպատակները և<br>2. գործառույթները<br>3. Իրավունքի մեկնաբանման տեսակները<br>4. Իրավունքի մեկնաբանման եղանակները<br>5. Իրավունքի մեկնաբանման ակտեր | Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն:<br>Ինքնուրույն աշխատանք:<br>Սովորողներն ինքնուրույն ծանոթանում են իրավունքի մեկնաբանման վերաբերյալ տեսական գրականության մեջ առկա կարծիքներին, կարդում են գիտական հոդվածներ իրավաստեղծ գործունեության տեսակների, փուլերի, եղանակների վերաբերյալ, գրում են ռեֆերատներ, ուսումնասիրում են իրավունքի մեկնաբանման հիմնախնդիրները ՀՀ-ում: |

| Թեմա 9<br>Իրավական կոլիզիաները և դրանց լուծումը<br>(2ժամ դասախոսություն,2ժամ սեմինար) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Իրավական կոլիզիայի հասկացությունը և պատճառները<br>2. Իրավական կոլիզիաների լուծման կառուցակարգերը<br>3. Տարբեր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաները և դրանց լուծումը<br>4. Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաները և դրանց լուծումը<br>5. Իրավունքի տարբեր աղբյուրներում ամրագրված իրավական նորմերի կոլիզիաները և դրանց լուծումը | Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն:<br>Հարցեր 1-5 -անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում եմ հարցերի շրջանակներում ճեռք բերված գիտելիքները, կատարում են խմբային քննարկումներ, ներկայացնում են կատարված ինքնուրույն աշխատանքի արդյունքները, փորձում են տեսական գիտելիքներն ամրապնդել գործնական աշխատանքով:<br>Ինքնուրույն աշխատանք:<br>Սովորողներն ինքնուրույն ծանոթանում են իրավական կոլիզիայի վերաբերյալ տեսական գրականության մեջ առկա կարծիքներին, կարդում են գիտական հոդվածներ |

| | |
|---|---|
| | իրավական կոլիզիաների լուծման տեսակների վերաբերյալ, գրում են ռեֆերատներ: |

Հարցաշար
§Պետության և իրավունքի տեսություն¦առարկայի ստուգարքի
(մագիստրատուրայի 1-ին կուրսի համար)

1. Իրավունքի հասկացությունը և հատկանիշները
2. Իրավունքի էությունը
3. Իրավունքի արժեքը
4. Իրավունքի գործառույթների հասկացությունը և սոցիալական նշանակությունը
5. Իրավունքի գործառույթների համակարգը
6. Իրավունքի հատուկ իրավաբանական գործառույթների ընդհանուր բնութագիրը
7. Իրավունքի սոցիալական գործառույթները
8. Իրավահարաբերության հասկացությունը և հատկանիշները
9. Իրավահարաբերության տեսակները
10. Իրավահարաբերության սուբյեկտ:Իրավասուբյեկտություն
11. Իրավահարաբերության օբյեկտ
12. Իրավահարաբերության բովանդակություն
13. Իրավաբանական փաստի հասկացությունը և տեսակները
14. Իրավական կանխավարկածներ
15. Իրավաբանական վարույթի հասկացությունը և հատկանիշները
16. Իրավաբանական վարույթի տեսակները
17. Իրավաբանական վարույթի փուլերը
18. Իրավաբանական վարույթի սկզբունքները
19. Իրավական կարգավորման հասկացությունը, տեսակները և փուլերը
20. Իրավական կարգավորումը որպես իրավական ներգործության հիմնական ձև
21. Իրավական կարգավորման առարկայի հասկացությունը և կառուցվածքը
22. Իրավական կարգավորման մեթոդները և եղանակները
23. Իրավական կարգավորման տիպերը
24. Իրավաստեղծ գործունեության հասկացությունը և սկզբունքները
25. Իրավաստեղծ գործունեության տեսակները
26. Իրավաստեղծ գործունեության փուլերը
27. Իրավաբանական տեխնիկա
28. Օրենսդրության համակարգումը
29. Իրավունքի իրացման (կենսագործման) հասկացությունը և ձևերը
30. Իրավակիրառման հասկացությունը և հատկանիշները
31. Իրավակիրառման փուլերը և իրավակիրառ ակտերը
32. Իրավակիրառ հայեցողության հասկացությունը, նշանակությունը և տեսակները

33. Իրավակիրառման տեսակները
34. Իրավական (օրենսդրական) բացերը, իրավական նորմերի կիրառումն անալոգիայով
35. Իրավունքի մեկնաբանման հասկացությունը,նպատակները և գործառույթները
36. Իրավունքի մեկնաբանման տեսակները
37. Իրավունքի մեկնաբանման եղանակները
38. Իրավունքի մեկնաբանման ակտեր
39. Իրավական կոլիզիայի հասկացությունը և պատճառները
40. Իրավական կոլիզիաների լուծման կառուցակարգերը
41. Տարբեր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաները և դրանց լուծումը
42. Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաները և դրանց լուծումը
43. Իրավունքի տարբեր աղբյուրներում ամրագրված իրավական նորմերի կոլիզիաները և դրանց լուծումը